



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«06» 05 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 45

Ձեռնարկողը՝

Քաղաքացի Շ. Մկրտչյան

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Արշակունյաց 127/19 հասցեում գտնվող արտադրական մասնաշենքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 45

« 06 » 05 2017թ.

Սպարտակ Բաբայան
Սպարտակ Բաբայան

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց 127/19 հասցեում գտնվող արտադրական մասնաշենքի վերակառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

Շ.Մկրտչյան

Ներկայացված նյութեր՝

Նախագծային փաստաթղթեր, նախնական գնահատման հայտ. /Գ կատեգորիա/

Նախագծող՝

«Էկո Աուդիտ» ՍՊԸ

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվում է վերակառուցել և ընդլայնել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց 127/19 հասցեում գտնվող մասնաշենքը: Առկա 4 հարկանի շինության աջակողմյան և ձախակողմյան հատվածից ընդլայնել 18X138մ և 14X138մ արտադրական մակերեսով 4 հարկանի շինություններ, ընդլայնման ընդհանուր մակերեսը կազմում է 17600մ², որից հաշվարկված է 24 ամսվա շինարարության տևողություն ըստ ՇՆԵՎԿ 1.04.03-2008 նորմատիվներով, այդ թվում 1.5 ամիս նախապատրաստական փուլ:

Տարածքը հիմնականում հարթ է, բարձրությունների տարբերությունը 1 կմ շառավղով չի գերազանցում 50մ և համաձայն ՕՌԴ - 86 մեթոդակարգի՝ ռելիեֆի գործակիցն ընդունվել է 1:

Երևան քաղաքի կլիման կրում է ցամաքային բնույթ: Բացարձակ նվազագույն միջին ջերմաստիճանը կազմում է -1.5°C, բացարձակ առավելագույն միջինը՝ +31.8°C: Մայրաքաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը և ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Նախագծի շինարարության կազմակերպման մասը մշակված է ըստ ՇՆԵՎԿ 1.04.03-2008 դրույթներով, որը նախատեսում է շին աշխատանքների 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով,
- ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն:



Արտադրական մասնաշենքի ընդլայնման շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝

- լիցք - 20000 մ³,
- հանույթ - 210000մ³,
- ընդամենը՝ 230000մ³ :

Շինարարական աշխատանքների իրականացման փուլի ընդհանուր տևողությունը կկազմի առավելագույնը 3 տարի:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվում են հետքահեքսկավատորով: Բնահողը տեղափոխվում է ավտոինքնաթափերի միջոցով 13-15կմ հեռավորության վրա: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով՝ ձեռքի գործիքներով, փոքր մեխանիզմներով:

Փոսորակի մշակումը առկա շինությունների մոտ, որտեղ չեն ապահովվում բնահողի բնական թեքության նորմերը, անհրաժեշտ է կատարել փոսորակի պատերի ամրացում:

Շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է ԿԵ-503.2A մակնիշի աշտարակային կոունկ 40մ սլաքի թռիչքով: Ի-Կ առանցքներում շինարարական աշխատանքների կատարման համար ընտրված է ՇԿԴ-63A մակնիշի թրթուրավոր կոունկ: Աշխատանքային կոունկի մոնտաժը նահրաժեշտ է իրականացնել համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության կողմից, ապահովելով աշտարակային կոունկի մոնտաժմանը ներկայացվող նորմատիվներին: Գիշերային ժամերին կոունկի սլաքները պետք է կոնպլեկտավորված լինեն գաբարիտային թարթիչ լույսերով:

Անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում:

Արտանետումների առաջացումը կապված է շինարարական աշխատանքների իրականացման փուլում շինարարական նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջանում է անօրգանական փոշի, բեռնատարների, այլ սարքավորումների աշխատանքի արդյունքում՝ այրվող վառելիքի վնասակար նյութեր, եռակցման աշխատանքների արդյունքում՝ աերոզոլ ու մանգանի մոնօքսիդի արտանետումներ: Շինարարական տեխնիկայի աշխատանքների ընթացքում իրականացվում է տեղանքի հարթեցում, հանվող հողային զանգվածի և առաջացած թափոնների տեղափոխում ավտոինքնաթափ մեքենաներով: Հաշվի են առնվում շինարարական հարթակում անընդհատ աշխատող տեխնիկայից առաջացած արտանետումները:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Ջրցանի (փոշենստեցման) համար օգտագործվող ջրածախսը ամբողջությամբ դասվում է անվերադարձ օգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում: Աշխատողների կենցաղային կարիքների համար տեղադրվելու են կենսազուգարաններ, որոնք աշխատանքների ավարտից հետո ապամոտաժվելու են և տեղափոխվելու այլ վայր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա մասնաշենքի ընդլայնման ընթացքում, շինարարական աղբն է: Այն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները:

Ապրանքային բետոնը շին-հրապարակ է բերվում բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին-հրապարակում:

Հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- մինչ աշխատանքների սկիզբը, բոլոր աշխատողներն անցնում են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, որն իրականացնում է աշխատանքների ղեկավարը,

- մինչ աշխատանքների սկիզբը, շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում,

- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնություն, ապա(անհրաժեշտության դեպքում)՝ կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատություն:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են.

- շինարարական աշխատանքների փոշու առաջացման ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսված են.

- ջրցանի ծավալները հաշվարկվել են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական նյութերի և քայուղերի պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- տարածքը կբարեկարգվի:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,



- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Ցամաքային կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենախնտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից դուրս (գարնանը՝ ապրիլ-մայիս ամիսներ):

Շինարարության ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն ժամանակավոր, կարճատև:

Ամբողջ շինարարության ընթացքում իրականացնել բնապահպանական միջոցառումներ՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով:

- Թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավել քանակություններ դեպի մթնոլորտ,
- Շինարարական մեքենաները շին-հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով:
- Բնահողով բարձր մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով՝ թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ:
- Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Եզրահանգումներ. Ամփոփելով վերոշարադրյալը, նախատեսված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շ. Մկրտչյանի կողմից ներկայացված «Երևան քաղաքի Արշակունյաց 127/19 հասցեում արտադրական մասնաշենքի վերակառուցման» շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Փորձագետ՝



Ա. Մինասյան